

ԲՍԺԱՆՈՐԴԻԳՐՈՒԳԻՆՆԵՐ

Պուկարիոյն անուր	12 ժր
Տարեկան	6 .
Վեցամսեայ	6 .
Արտատպանական	
հասարակական	15
Վեցամսեայ	8

Վեցամսեայ	3
Տարեկան	1.50

Սահմանափակ սուրճարանները երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սահմանափակ երեսին սահմանափակ համար 20 ս. զեղք կրչուս :

Վաճառքի համար ձեռքի 10 սահման

ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalémecarian,
(Autriche)
Mechitharistengasse
W. 4.
Vienne

Նախկին և զրաւ
հիւրագրութեան
ցիւնը
Redakcia na vstet
«Շարժում»
Варна
Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)
Արտատպանական
համար
Վիեննայի համար
Վիեննայի համար
15 ՄԱՆԹԻՄ

ԼՐՈՒԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒՄԻ ԶՈՐԻՔԵՆԱԲԵՒԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ՇՈՒԼԻՍԻ ԲՍԺԱՆՈՐԴԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՆԻՎ ՎՃԱՐԵ

ԿԱՐՁԵԱԼ ՕՐՄԱՆԵԱՆԸ

Երոպական թերթերը հայորդիցին որ Օրմանեան Սուլթանից պահանջում է վերջ տալ խոստովանելուն և վերջապէս հայերին թող տալ ազատ երթևեկելու եւ իբր թէ, եթէ Սուլթանը այդ պահանջին բաւական չը տայ, այն ժամանակ պատրիարքը պէտք է հրաժարական տայ :

Ես մի քանի սարգսյ ընթացքում պատրիարքը մի քանի անգամ Սուլթանին պահանջներ արեւ, մի քանի անգամ սպառնաց հրաժարական տալ և երբէք ոչ իր պահանջներին բաւարարուիին ստացաւ, և ոչ էլ հրաժարվեց պատրիարքութիւնից, որը ինչպէս երեւում է շատ հանելի է Օրմանեանին :

Օրմանեանը իր պահանջները զիմաց չբանջաններ ընդունեց իր և իր եպիսկոպոսների համար, ու լեց, սուսիկ փուսիկ տեղը նստեց :

Օրմանեան ոչ միայն այգային այլ անհատական անգամ արժանապատու թիւն չունեցաւ : Եթէ ֆոքր ինչ արժանապատու թիւն ունենար, մինչեւ օրս կամ պատրիարք չէր, կամ թէ Սուլթանից գոնէ իր պահանջներից մի քանիսին բաւարարու թիւն էր ստացել :

Օրմանեան մինչեւ օրս չը կարողացաւ ըմբռնել, որ պատճառաբանված հրաժարական տուող անհասարակ պաշտօնեան իսկ իր հրաժարականը ետ չի ընդունում, մինչեւ որ հրաժարվելու գրգռող պատճառները չեն վերանում :

Նա չուզեց հասկանալ որ առանց այդ պարագային հրաժարականը ետ ընդունելը կատարելով լրբութիւն և ազգային արժանապատու թիւնը ցեխոտել է :

Հիմա ոչ միայն հայոց ազգը, այլ և Սուլթանը չի հաւատում Օրմանեանի հրաժարականին :

Օրմանեան հայոց պատրիարք

քը, պոռնիկ է կարծել, որին ոչ ամուսինն է հաւատում և ոչ էլ տարփածուէ :

Այսօր հայութիւնը գիմանում է այդ պատրիարքին :

ՎԱՐՂՈ

ԺՕՒՅՑ ԵՐԵՒԻ ՆԱՄԱԿԸ

«ԲՐՈ ԱՐՄԵՆԻԱՅՈՒ ԿՄԲԱՎՐՈՒԹԵԱՆ»

— 0 —

Բարեկ 29 յունիս 1902

Պարոն Տնօրէն,

Մամուլի ընկերակցութեան կողմէն պատուիրակ կարգուած ըլլալով Պէտնի մէջ կայանալիք Մամուլի համաժողովին, ինչ համար ընտրուիին անկարելի էր մասնակից ըլլալ նոյն միջոցին Պրիւքէլի մէջ տեղի ունենալիք հայաստանեայցի համաժողովին, որուն մասնակցելու զիս հրաւիրելու ըստ հաճած էիք :

Սակայն ես չէի ուզեր որ այդ ակաճա բացակայութիւնը տեսակ մը անտարբերութիւն ներկայանայ (իսկապէս աններելի) դէպի հայերը, որոնք այնքան սարսափելիօրէն ջարդուեցան և այնքան անգթօրէն հալածուեցան, ինչ որ կըլլան, իմիջի այլոց, կարմիր Սուլթանի բռնութիւններէն և ոչ քրիստոնեայ հպատակներէր : Միթէ՞ պէտքը կայ վերջին շրջանը որ քառօրեա դարէ ի վեր մեծ մարդասպանը 450—500000 քրիստոնեայ կամ թուրք ջարդեց, սուանց հաշուելու արտօնալինքը որոնց թուելը բոլորովին անհնարին է :

Ինչպէս կաթողիկ, գթասիրութիւնը և արդարութիւնը զիս կուսուցանեն երբէք խորութիւն չը գնել ճնշումներուն մէջ, ըլլան անոնք դատանակից կամ ոչ, անոնք ամենքն ալ մարդիկ են, ամենքն ալ իշուառ եղբայրներ :

(*) Ժօնէն Տրնէքարտուարէ Բարեկ Մամուլի ընկերակցութեան և կաթողիկ մամուլի մէջ միշտ պաշտպանած է թուրքոյ ճնշումներուն դատը :

և զոհեր ամենատոկալի ու արիւնոտ բռնութեան մը որուն նմանը տեսնուած չէ տարեգրութեանց մէջ, Ներոնի թագաւորութիւնն ալ մէջը հաշուած :

Իբրեւ Ֆրանսացի միթէ ես կրնամ ուրանալ այն, ինչ որ այն պէս լաւ ըսած է Սիւլի-Բրիտոմ. «Ես հայրենիքով լի սիրտ մը ունիմ. և աւելի Ֆրանսացի եմ, ու աւելի մարդասէր կզգամ զիս» :

Ուրեմն ես ամբողջ սրտով կը ծախահարեմ բոլոր զանոնք, որոնք իրենց նպատակ դրած են Արեւելքի ժողովուրդները, առանց ցեղի և դաւանանքի խտրութեան, ազատելու իսկապէս անտանելի սարսափներէ, մանաւանդ ամենահեղինակաւոր հայերէ լսած եմ որ անոնք նպատակ չունին թուրքիւն պատառ պատառ ընել տալու, որ ամենու համար, մանաւորապէս փրանսայի համար, սոսկալի բարդութեան մը եւ թերեւ աւելի սարսափելի չարիքի մը նախադուռը պիտի ըլլայ :

Եթէ ես կարենայի արտայայտել իմ շատ խորհում կարծիքս Պրիւքէլի համաժողովին, հայերուն պիտի ըսէի, ինչպէս և անոնց բոլոր հայրենակիցներուն, որոնց մարտիրոսութեանը մենք կը հետեւինք այնքան վշտով, — Գաղութիւն, դուք անցիտակ չէք որ ձեզի հետ շատ մը թուրքեր ալ կը բաղձան անկեղծ խաղաղութիւն մը և ամբողջ օթօմաններու եղբայրական միութիւնը ողջագատ, որդար և մարդասէր վարչութեան մը տակ, զոր երկար ատենէ ի վեր Երլարդի մէջ անծանօթ է :

Մի յուսահատիք երբէք, ինչ ալ որ ընեն, Արդարութեան ժամը հնչելը չը պիտի ուշանայ : Իմ կողմէս, ես անկեղծօրէն կը հաւատամ որ Պօլսոյ մէջ Այնուրթիւնը պիտի արթննայ :

Ես հաստատօրէն կը հաւատամ խաղաղած թուրքոյ վերածնութեանը, ուր շուտով գոյութիւն չը պիտի ունենան ոչ ճնշողներ

և ոչ ալ ճնշումներ, այլ միայն շարժականիցներ որոնք եղբայրաբար միացած են օրինաւոր և զատու թեան ու բախու թեանը մէջ, մեծ ժողովուրդ մը կը կազմեն, որուն բարեմասնութիւնները աւելի աչքի իյնալով Երոպայի համակրութիւնը և յարգանքը պիտի ստանան քաղաքակրթութեան և աստղադիմութեան յառաջընթացումին մէջ :

Ժօնէք Տրնէք

ՌՈՒՍԻՈՅ ՍԷՋ

(Էտրօքէէն թիւ 31)

(Եւր. Ասխորդ թիւն և վերջ)

Տակաւ առ տակաւ սգադիմութիւն հիմնարկութիւնը և սգադիմութիւնը երկրին մէջ ժողովուրդին համակրութիւնը բոլորովին կը գրաւեն, վերջը սգադիմութիւնը բարոյական դիմադրող ուժ մը կը հանդիսանան տեղական իշխանութեանց քմահաճոյքներուն, ոտիկանական ձեռնարկութեանց և և :

Խեղճ Բլէվէն կուգայ եւ կսէ. «Ահա բարոյապէ շատ ազատ և ազնիւ աշխատողներու գոտակարգ մը. պէտք է զայն խղճել» : Եւ Բլէվէն զայն ջնջեց գրչի հարուածով մը, սգադիմութիւնը վստահելով նահանգապետներուն և անոնց գրասենակներուն : Ասկէ կրնար հասկցուիլ թէ ոռուական սգադիմութիւնը ինչ պիտի գտանայ, որը կատարելագործման կը մօտենար, նոյն իսկ օտարական սգադիմութիւնը կարծիքով :

Պ. Բլէվէն չի տեսնար որ քիչ մը վերջը ստիպուած պիտի ըլլան գիմելու Չէմսթվոյի սգադիմութիւնը :

Ահա, այն ատեն յեղափոխականները պիտի կրնան ըսել «Մեր ամենալաւ աշխատակիցը ինքը կառավարութիւնն է» :

Եւ այս առթիւ թոյլ տուէք ինձի քանի մը խօսք ըսել Բալմաշէֆի (Ապիաքինը սպանողը) դատավարութեան մէջ պատահած միջադէպի մը մասին : Բալմաշէֆ նախապէս գիտէր որ ինք մահուան պիտի դատապարտուի : Բայց ան գիտէր նաեւ որ դատաւորներուն յանձնարարուած էր ոչ թէ իր անձով զբաղել, այլ աւելի հասկնալ թէ Բալմաշէֆ մեղսակիցներ ունէր :

Ատոր համար ան դատաւորներուն

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՅ

կըսէր. «պարոն գատաւորներն եւ մեզ սակից մը ունիմ, բայց անոր անունը պիտի տամ իմ բացատրութիւններէս վերջը...» Այդ խօսքին սկիզբը կայ՝ ծակի ազդեցութիւնը կը թողոյ :

Գատաւորները յաջողութեան և մեծ ուրախութեան մը մէջ կ'ենկալին : Քարտազարները արդէն կ'ը պատրաստուէին մեղսակցին անունը գրելու : Նախադասութեան վերջը յիշ մը գանձը հիւսիսով ցուցանուց, բայց կրկին գաղտնիքը հասկնալու յոյսը թողոյց :

Բաւմաշէֆ աղէկ կը հասկնար իր գատաւորներուն հոգեկան վիճակը. եւ այդպէս ձաղրելով գանձը, իր որոշ, կարուկ եւ յանգուզն բացատրութիւնները տուաւ եւ վերջացուց այսպէս. «Եւ հիմակ, ես պիտի ձեզ յայտնեմ մեղսակցին անունը : ...»

Ամենքն ալ յողուեցան, բայց այդ յուզումը պաղեցաւ երբ Բաւմաշէֆ կարուկ կերպով որոշեց. «Իմ մեղսակիցս կառավարութիւնն է :»

Այս ճշմարտութիւնը՝ թէ կառավարութիւնը անեցող յեղափոխութեան ամենալու մասակարարն է, անվիճելի է :

Առաջին մարդը, որ ըստ ուսուսական վարչութեան, պատասխանատու է այն ամենուն հանդէպ որ կը կատարուի իր կայսրութեան մէջ, եւ որ պիտի առաջինը ըմբռնէր այս ճշմարտութիւնը. անով ամենէն աւելի հետաքրքրուելով, ոչինչ չի հասկնար եւ քան մը չի տեսներ. նա է Նիքոլայ երկրորդը : անուշ եւ թոյլ նկարագրով, բարի մասնաւոր կեանքին մէջ, ան բոլորովին չի յարմարիբ այն պարտութեանը, ուր տեղաւորուած է ձագու մի պատահականութեամբը : Վեհերոտ, բարիք մը ընել կամեցող, բայց ամեն բանէ վախճող, ան խաղալիք կը դառնայ էնթրիկաններու եւ կատաղի յետադիմական ներու ձեռքին մէջ, որոնք միայն բունապետական գահերու շուրջը կը տեղեկան :

Ասոր համար է որ ներկայ ցարը միշտ ասոր անոր ազդեցութեան ենթակայ է. նախ իր հօրը, ետք մօրը, միշտ Բարեւոնցիցիի եւ հրեանի ելեւմտից, երբեմն ներքին գործոց նախարարին : ...

Է. Ս.

Յունիսի «Հնչակ»ը պաշտօնապէս կը յայտարարէ թէ Հնչակեան երկու հատուածներու կեդրոնները վերջապէս դադրած են գոյութիւն ունենալէ, եւ ամբողջ կուսակցութեան քուէով ընտրուած է Հնչակեան կուսակցութեան միակ կեդրոնական վարչութիւնը, որ իր պաշտօնին գլուխը անցած կը վարէ արդէն կուսակցութեան գործերը :

Ինչպէ՞ ըլլայ այդ միութիւնը, մեք ուրախ ենք, որովհետեւ կուսակցութիւններէն մէկը պակասեցաւ. հիմայ հայութեան մէջ գոյութիւն ունի երկու յեղափոխական կուսակցութիւն միայն՝ Գաղտնիցիութիւնը եւ Հնչակեանը :

Ճիշդ է փոփոխողներ կան որ այդ երկու կուսակցութիւններն ալ միանան, որքան կարելի է շուտով. հետեւելով հին ճշմարտութեան մը որ միութիւնը գորութիւնն է. բայց մեր կարծիքով այդ միութիւնը փութով ընելը այնքան մեծ առաւելութիւն մը չի խոստանար :

Ճշտապէս ի վեր հնչակեանութիւնը դադրած էր յեղափոխական մարմին մը ըլլալէ. ան գրեթէ գոյութիւն չուներ, եւ այսօր միայն իր տարրաձեւը, շախմատուած ուժերը հաւաքելու կ'ցոյց տեսնէր մէջ կը դնուի : Հիւանդութիւնը քստերեւոյթին անցած է եւ կազմութեան շրջանի մէջ կը գտնուի : Շրջան մը՝ ուր կրնայ հիւանդութիւնը աւելի վտանգաւոր կերպով կրկնուի : Թողունք որ բոլորովին առողջանայ :

Պուլիարիոյ հայ վարժարաններուն մէջ դասատուութիւնները վերջացան. Արձակուրդ է : Երկու ամիսները ուսուցիչները գուցէ կրկին պիտի թափուին անորոշ կացութեան մը մէջ, մինչեւ որ հողաբարձութիւնները յարեհաճին կրկին գանձը հրաւիրել ուսուցչութեան, կամ արձակել :

Շատ քաղաքներու մէջ հողաբարձութիւնները կանոնաւորապէս գոյութիւն չունին. դպրոցին գործերը կը վարեն մէկ երկու մնացորդ հողաբարձուներ, կամ թաղական խորհուրդ-

ները : Պուլիարիոյ նման առատ երկրի մը մէջ, ուր կառավարութիւնը ամեն ազատութիւն տուած է իր հայ հպատակներուն իրենց կրթութեան գործը կանոնաւորապէս վարելու համար. հայութիւնը տեսակ մը մեռելային անտարբերութեան մէջ կը գտնուի զէպի իր դպրոցները, եւ եթէ մեր ուսուցիչները, նոյն իսկ ամենէն վարձեցը, անխիղճ մարդիկ ըլլան, մեր մանուկները ոչինչ չը պիտի սորվին :

Ուսուցիչները խիղճ ունին. կրնն իրենց ձեռքէ եկածը, կրնն իրենց կրթածը, բայց խղճովին նիւթապէս սպասով դասակարգն է որ լըբութիւնը կուսակցութեան միշտ անխիղճ եւ անտարբեր մնալու :

ԿԷՏ

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ԻՐ ԼԱՆԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՄԷՋ

Շատ կարելի է հազար անգամ ըստաւաններն է որ պիտի կրկնեմ, բայց ինչ ընենք, ուրիշ միջոց չիկայ. թէպէտեւ միշտ կը յիշենք ասացուածքը որ ոչ լուսիցէ ունկամբ... « Եւ որովհետեւ կառավարութիւնը չունի մի միայն գրելով պիտի գոհանանք, զուցէ ժողովրդին ոչխարամիտ դասակարգը վայրկեան մը իր թուլացած քունէն արթնցնենք :

Կառավարութիւնը չունի մի միայն գրելով պիտի գոհանանք, զուցէ ժողովրդին ոչխարամիտ դասակարգը վայրկեան մը իր թուլացած քունէն արթնցնենք : Կառավարութիւնը չունի մի միայն գրելով պիտի գոհանանք, զուցէ ժողովրդին ոչխարամիտ դասակարգը վայրկեան մը իր թուլացած քունէն արթնցնենք : Կառավարութիւնը չունի մի միայն գրելով պիտի գոհանանք, զուցէ ժողովրդին ոչխարամիտ դասակարգը վայրկեան մը իր թուլացած քունէն արթնցնենք :

ԲԱՆՍՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

12

ՄԱՍ Ա. ԳԼՈՒԽ Ե.

Յունվարի 1ի գիշերն էր. Տավրիկեան նահանգի Ա. քաղաքի, երկրորդական փողոցներից մէկում գտնվող երեքյարկանի մի համեստ շինութեան վերին յարկի սենեակները ամբողջովին լուսավառված էին : Բայց այդ լոյսը այնքան էլ լաւ չէր երեւում, որովհետեւ ըստ պատահանները ներսից գոցված էին փայտեայ փեղկերով :

Նոր տարին էր ստեփան այն տեղ. երեք սենեակների շարի շար լցված էին երկսեռ բազմութիւնով : Հիւրերն էին Ռուսներ, հրէաներ եւ մի քանի հայեր : Նրանց թիւը հարիւրից անցնում էր. ամենքն էլ խոսիլիզէն մարդիկ էին, հասարակութեան

այն մասից, որը խելք ունի. բայց գրամ չունի, որը մեծ, շատ մեծ իղջալները ունի, բայց այդ իղջալները իրագործելու գրական «իջոցներից զուրկ է : Դրանցից ամեն մէկն էլ գրեթէ ուսուսական բանտի եւ հարմանքի հոտը առել էր : Մեծատեսութիւնը մի քանի անգամ արդէն զանազան տեղեր էր աքսորվում : Բժիշկներ, գիւղատնտեսներ, ուսուցիչներ, ստատիստներ, բժշկուհիներ, վարժուհիներ, կրթութիւն ստացած զայնակներ կազմում էին այդ բազմութեան ամբողջութիւնը : Դրանք բողոքող տարրի ներկայացուցիչներն էին. բողոքող ամեն տեղ եւ ամեն պարագայում, զանազան աշխարհներից, բարիտի կամ կառավարութեան շնորհիւ այս նահանգը ընկած է հիմա հասարակ էին իրար տեսնելու. խօսելու, մտքեր փոխանակելու, սրտեր մխիթարելու համար :

Այդ հիւրերի թոււով գտնվում էր եւ մեր բարեկամ Գոլուբիչը. նա իր

վաղեմի բարեկամ Գոլուբիչի եւ մի բարձրահասակ, նուրբ գիւղացիների, թոքատի հետքերը դէմքում դրոշմված հրէա երիտասարդի հետ մի կողմ կանգնած զրուցում էր :

Պատում էր հրէան. նա նոր էր դուրս եկել Պետերբուրգի «Կրեստ» (խաչ) կոչված բանտից, ուր չորս տարի շտապողական բանտարկված էր մնացել մի լոյսի մէջ, առանց մարդի հետ խօսելու :

«Անտանելի է ելլոյսը, անտանելի է «Կրեստ» կեանքը, Տարիներով մենակ խցի մէջ մնալ, տարիներով մարդի հետ չը խօսել, տարիներով գրքի երես չը տեսնել, գրել չը կարողանալ : Մի քիչ էլ ասել տեսել բանտարկութիւնս, գործս վերջացած էր. կամ կը մեռնէի, կամ կը զրթվէի : Եւ գժվողներ շատ կան. իսկ սպաշտացողները անթիւ են. 100ից 80ը ապուշի է վերածվում :

«Բրիտանի խաչը կրելը շատ դժբեր է եղել. եթէ նազովիցու ժամանակ «Կրեստ» բանտային դրու-

ցութիւնը կրեցի, շարաթ օրուան աղքատին վարժարանի հանդէպին տնօրէնի տեղեկագիրը մտիկ ըրած պահուս զոր խորունկ սպաւորութեան մը տակ մտիկ կընէի, շահատակման նոր ասպարէզի մը հետզհետէ ընդօր. ձակուիլը տեսնելով : Տնօրէնին տեղեկագիրը տեղեկագիր չըլլալէ զատ զուտ բառերու և եղաւ նակներու կեղծիք մըն էր. երբէք ունկնդրած չէի այս տեսակ տեղեկագիր մը որ լալկան բանաստեղծութեան շեշտերով կարգադրի որը իր սպաւորութիւնը ներգործեց մի միայն Տ. Օրմանեանի պատիկ աղջկան. պատիկը յուզուած սկսաւ լալ : Այս ալ յաջողութիւն մըն է :

Տեղեկագիր մը, որ չընելու չըսելու կերպով քծնումներ և զայափարներու հակասականութիւններու հաւաքածոյ մը, և մի քանի կէտերը միայն պիտի յիշենք : Տեղեկագիրն առաջին մասին մէջ հաշիւ կուտար ըսելով որ տղարները առողջ և տեսակ տեսակ վարակիչ և տարափոխիկ հիւանդութիւններէ զերծ պահելու միջոցները յոյս տուած ըլլալով, մեծապէս օգտուած են զպրոցական ժամօրէն և բացակայութիւնները անհամեմատ կերպով նուազ եղած են, են. են. այսչափ ծածուկ ըսելու պէտք չի կար. ինչո՞ւ ճակատաբաց չես ըսեր որ ասով Զորեանցի վարժարանը հակաանթիւ թեան ենթարկուած ըլլալը շեշտել կուզես, որը մեզ նման շատեր կը հասնան գուցէ : Այսչափով ալ չը գոհացաւ տիարը և սկսաւ սիրոյ ճառը կատարել բանաստեղծական շեշտերով. «նախ իր խօսքը ուղղեց իր աշակերտներուն գործերէն» ի տարափ մը թուից աւնոնց ուր բարձր գաղափարներու հովին տակ հակասութիւններ կա-

յին . որոնք ի հարկին կրնան հա-
կառակը փաստարանու իլ . վերջը
պարձաւ ներկաներուն հարկեցե-
քսի ահեղ տարափ մըն ալ անոնց .
այս վայրկեանին ինքզինքս ձա-
խող պատուելի մը ներկայու-
թեան կր կարծէի . և հարկեցեքը
վերջացաւ սապէս . հմիլիպէի հա-
յուկիւնը բարձրագոյն նախակր-
թարան մը կրնայ պահել ինքն
մէկ հայու թիւն միայն ըլլայ : Ան
ճարակութիւն անճարակութեան .
ասով ալ հարուածը կողմէ վար-
ժարանի մը որուն գոյութիւնը
անկէն քաղաքակրթութեամբ եր-
կիրներ և մէջ ընդունուած է , պայ-
մանաւ որ գոհացում տայ : Եւ թէ
ինչո՞ւ չես կարող աւելի բաց խօ-
սիլ . ինչո՞ւ կը կեղծես . ուր
զենք տեղեկագիրք մէջ ըսած
ներք որոնցմով ցաւ մը կը յայտ-
նէիք որ ուսուցիչները ազատ
լին ձգեր . կուզուի որ կեղծեն ,
սարուկի նման խոնարհին . եւ
անձնական համոզումները զոհեն
անոնց բանութեան . և իսկապէս
այս նպատակով չէ՞ր որ գուն վառ
նայի անձնական վարժարանը
հաստատեցիր . ինչո՞ւ որիչ որչ
զապափարի ծառայողները հիմայ
քննադատելու ճիգեր կը թափես
եթէ ոչ ուղղակի գոնէ անուղղա-
կի կուզես հարուածել . այսքան
չոյն այդ կեղծողները որոնք ազ-
ղը այդքան պարտքի տակ ձգե-
ցին , վրիժաւ գազափար . որուն
ազդեցութիւնը քիչ մը գոնէ կը
կարբցենք . բեզ կը կարծէի . չեմ
ուզեր երկարել . գրութիւնս ,
հարժումս սինակները շատ
սուղ են , միայն մէկ խօսք մըն
ալ պիտի ըսեմ . այն է թէ հրապա-
րակաւ պիտի խնդրեմ ըստ այն
պիւստի և անկողմնակալ հոգա-
բարձուներէ որ այլ եւս բարեկա-
մութեան , ազգականութեան , կու-
սակցութեան խնդիրը վարժարա-
նի սուրբ սեմէն ներս չը բեր-

ցնեն և միանգամ ընդ միշտ ջա-
նան մաքրել մեր վարժարանները
տեսակ տեսակ վարակիչ միջոց
ներէ , մանաւանդ այս տեսակ
անճարակ տրպիւնութեան .
Ունկեղոյ մը

Ա Ջ Դ

Հոգրարձու թիւն կը փութայ
ծանուցանել արդոյ ազգայնաց թէ
ազգային վարժարանաց տմա-
վերջի հանգէսը տեղի պիտի ու-
նենայ յառաջիկայ կիրակէ , 7
յուլիս , ի ժամ 2 . ի սրահ Պանդ-
րայ :
Հանգէսին պիտի մասնակցին
Օր . Լիտիա Ամիրխանեանց դաշ-
նակի վրայ նուազելով և նորա-
կազմ երգեցիկ Պսուժը :
(Կնիսի)
Վառնա 5 յուլիս 1902

ՁՈՒԱՐՃԱԼԻԲ

ՆՄՈՒՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԻ ԻՐ
ՁԵՌՔՈՎ ԳՐԱՍԻ ԻՐ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԵՆ
Իր թէ պատրիարքարանի ջը-
րակիրները ձանկիրւանը կը ծե-
ծեն , ունեցած շունեցածը կը յա-
փշտակեն , նաև ժամացոյցը . ու
ձանկիրւան իբր սուտ մեռել ձե-
ւանալով կազատի ջրհանկիրնե-
րու ձեռքէն և 47 երեսին մէջ
այսպէս կրտէ :
«Ինձի հետ շատերուն զար-
մանք երեւաց ձանկիրւանի բա-
նեցուցած ձեռակերպութիւն .
շատ հիանալի միջոց մըն էր » :
51 երես
«Ազգեանի վախ սոսկալի էր ,
իր աչքեր ձանկիրւանի վրայ
էր . միշտ և նորա վեցհարուած-

եանին .
51 երես . ձանկիրւան .— (ժա-
մացոյցը նայելով) Արքայան քեզ
տաս վայրկեան միջոց . կրնաս
խորհիլ և ընտրել . կամ պատ-
պիտի գաս հետս . կամ կեանքդ
պիտի մոռնաս » :
(Անշուշտ ընթերցողը մոռա-
ցած չէ որ ձանկիրւանի ժամա-
ցոյցը ջրհանկիրները յափշտա-
կած էին , հիմա ուսկէ երեւան
եկաւ ժամացոյցը)
54 երես . ձանկիրւան Ազգեա-
նին .
«Արքայան , կտակ ունի՞ս . ըրէ .
գրեմք քահանայ պիտի ուզես հո-
զոգուելու համար . բայց ես
այդքան չը պիտի ընեմ , քանի
որ վատ եմ » :
54 երես . ձանկիրւան Ազգեա-
նին .
«Կա հասած է վերջին վայրկե-
անդ , լուսթեանդ թարգման
պիտի ըլլայ վեցհարուածնիս ար-
գարացի ձայն » :
44 երես «ձանկիրւան վեցհա-
րուածեան օգին մէ կրակեց . Ա-
չըգե ն փաթթուեցաւ ձանկիր-
եանի ոտքերու և համարելով
ըսաւ . աման ոտքդ համարեմ » :
45 երես
«ձանկիրւան Ազգեանին մօ-
րուքէն բռնած օտքի հանեց և
ըսաւ . բնաւ մի աշխատիր խոյս
տալու . ոտք համարել և լալ օ-
գուտ չի ըներ » :
61 երես
«ձանկիրւան խօսած միջոցին
նախ իրեն աչքերէն կարծես կը-
րակ կը ջատկէր . յետոյ սկսեց
յուզուիլ և արիւնը տաքցաւ .
սկսաւ յուզուիլ իր խոսքերուն
վերջ չը բերած արձուկներ սե-
զանին վրայ դրած էր . կարծես
ստորճանակէն կապուէր պատաս-
խանը ոչ թէ ճաճատէն » :
62 երես .
Տաճառ ձանկիրւանին անունը

կը հարցնէ . և ձանկիրւան կը
պատասխանէ .
— «Անունս , Պահ կամ Աղա-
տու թիւն » է . հասկցաք անունս
ի՞նչ ըլլալը :
90 երես .
ձանկիրւան ցուցածառ բեր-
նին գնելով (իր ձերբակալուած
տեղը) ըսաւ Հիւսնիին , [ստի-
կանապեո] :
— «Սուս . և գլխի շարժումով
Հիւսնիին ճամբայ ցոյց տուաւ
երթալու :
«Հիւսնիին իր դիւային տառնեը
կրճտելով և գլուխ շարժելով հե-
ռացաւ ձանկիրւանի ցոյց տուած
ճանապարհով » :
93 երես
Հիւսնի ձանկիրւանի .— Խա-
նութիւց և տուեղ բանալիներ
կուտա՞ս :
ձանկիրւան .— Եթէ բռնի կեր-
պով չի պահանջես , կուտամ , ա-
հաւ սիկ :
«Ի հարկէ ձանկիրւանի ըն-
թացք շատ վերաւորեց Հիւսնի-
ին , որովհետեւ ձանկիրւան
կարծես ընաւ կարեւորութիւն
չունեցող մէկի մը հետ կը խօ-
սէր իրեն հարցումներուն կը պա-
տասխանէր և ոտքի վրայ կը պը-
տտէր սենեակի մէջ , սիկաբ ծխե-
լով » :
Այս անունը երբէք տեղի չեն
ունեցած և ձանկիրւան ստած է
լրբօրէն .
Մ .

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Արեւելք»ի կողմասեան թղ-
թակիցը կը հաղորդէ սր Պարս-
կաստանցի երիտասարդ հայ գոր-
ծարանատէր մը , Յ . Աւետեան իր
նշանախօսութեան և ամուսնու-
թեան առթիւ 30000 ռուպլի նուի-
րեր է , իր կնոջ անունով ալ շը-
կանց վարժարան մը բանալու :

— Թողէ՛ք . այդ սխտուր պատմու-
թիւնը , Աստուած սիրէք , միջամտեց
Քրիստոսի . այսօր ուշախառնալու օր
է . աստօղիկ ենք ուրախանալու հա-
մար . Ուստ ամբողջ ժողովրդի կեան-
քը վշտերի մի շղթայ է . քանի այդ
շղթան չի կտրուած , քանի նրա մէջ
ուրախութեան , երջանկութեան հան-
գոյցներ չիկան , ա՛րքոյ Ռուսաստա-
նի մի սկիւտառ է ներկայացնում :
Հաւատացէք ասորեքութիւնը շատ
փոքր է . եթէ մենք լաւ , ուշի ուշով
քննենք մեր երկրի կեանքը :
Գոյուրէ՛ք գեւ իր խօսքը չէր վեր-
ջացել , երբ ալ կողմի սեակուժ
սխտեցին երգել . բաւական ներգաշ-
նակ եւ ազդու կերպով .
«Ամայի և մեր ծովը ,
Օր ու գիշեր ազմուժ է
Ու իր սեւ տարածութեան մէջ
Մեծ դժբախտութիւններ պատմէ՛ք
Ե՛րէ՛հ . եզրայրներ . լաւ քամի է .
Առագաստ . լցվեց , ուսեց
Անա կը թռչի սառուն ալիքներով
Արագածու իմ մակուղը »
Վերջին սողերէց ոգեւորվեց ալ-

բողջ բազմութիւնը և կրկնեց «Կը
թռչի սառուն ալիքներով . արագածու
իմ մակուղը :
Գոյուրէ՛ք իսկոյն գնաց երգողնե-
րի մօտ . Համակրելի հրէան զիմիով
Մայրիկեանին սասց .
— Չարժանալի է ողու ժողովուրդը .
նրա երգերը լսածը միջոցին զգում ես
որ դու մի բուռն . հսկայ տարիա-
յին վիթխարի ուժով ժողովուրդ է .
մի ժողովուրդը որը կարող է կարծք
տալ ամեն մէկ վտանգի , տապալել
ամեն մի խռչընդոտ , որը արգելք է
հանդիսանում նրա ընթացքին , իսկ
իրականութեան մէջ , նա սարուկ է
և հասարակ օստիկանին անպամ դի-
տադրել վախենում է :
— Այո , ճիշդ է . բայց այդ հսկայ
զօրեղ ժողովրդին այդ վիճակին հաս-
ցնելու համար , դարեբով , նոյնչափ հս-
կայական բոնութիւն է գործ զրկել
անասնացնելու համար : Մի մտացէ՛ք
որ զեւ երեսուն տարի առաջ այդ
ժողովուրդը կատարելապէս անասու-
նի վիճակի մէջ կը շտնվում . ողու
ազնականը նրա հետ վարվում էր

ինչպէս իր կովի . եզան եւ ձիւն հետ
երեսուն տարվան կէսազատութեան
մէջ այսչափ հազիւ կարող էր լինել :
Մաղիկեանը դեռ իր խօսքը չէր
վերջացրել երբ նրանց մտեցաւ մի
ձովագոյն աչքերով միջանառակ ողու
օրիորդ և խօսակցութիւնը բնգհա-
տելով ստեց .
— Երեցէ՛ք , պարոն Մաղիկեան ,
Գոյուրէ՛վից իմացայ որ դուք աք-
սորված էք եղել հիւսիսային Ռուս-
լի կողմերը , ճի՞շդ է :
— Այո , օրիորդ :
— Որքան կարելի է որ դուք տե-
ղեկութիւն ունենաք իմ եղբոր մա-
սին . նա էլ այնտեղ էր աքսորված
և անձնասպան է եղել . նրա վերջին
օրերը ինձ շատ են հետաքրքրում :
Օրիորդ էլ չը կարողացաւ շարունա-
կել . սկսեց դառնութեամբ լալ : Մա-
ղիկեանը և հրէան շարած մտացին .
վերջապէս Մաղիկեանը սթափվելով .
— Երեցէ՛ք , օրիորդ , ձեր մակա-
նուն կարելի է հարցնե՞լ :
— Ես ստիքսով :
— Այո , օրիորդ , ճիշդ է :

Ես պատրաստ եմ տեղեկութիւն-
ներ տալ ձեր կղբօր մասին . և բա-
ւական լաւ տեղեկութիւններ , միւ-
թարիչ տեղեկութիւններ , թէեւ մե-
ռած մարդի մասին որչափ էլ լա տե-
ղեկութիւններ տամ , այնուամենայ-
նիւ վերքը չի բուժվի :
Երբ է՞ք ուզում օրիորդ , ես միշտ
պատրաստ եմ :
— Հէնց հիմա . եթէ կարելի է :
— Կարելի է . Թինչու չէ . բայց հի-
մա մանրամասնօրէն չենք կարող խօ-
սել , մեզ կը խանգարեն . զուք էլ
այսպիսի մի երկկողմում շատ կը
յուզվէք : Առայժմ այսքանը կասեմ որ
ձեր կղբայրը այնտեղ ապրել է իրիւ-
լաւ մարդ , լաւ յիշատակներ է թողել .
և սիրվել է ամենքից .
— Օրիորդի աչքերը ուրախու-
թեամբ փաղկեցին . նա համաձայնեց
յետաձգել եւ իր հասցէն տալով
Մաղիկեանին , խնդրեց միւս օրը ի-
րենց այցելել :
(Շարունակելի)

